5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահ Էդգար Մարգարյանի վրա
6. Ուժը կորցրած ճանաչել Փարաքար համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 10-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» N 353-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2024 թ. հունիսի 10
գ. Փարաքար

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ Արմավիրի մարզի
Փարաքարի համայնքի ղեկավարի
2025 թվականի հունիսի 20-ի
թիվ 530-Ա որոշման



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ**

Հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Մարգարյան - համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Անահիտ Վարդանյան - համայնքապետարանի աշխատակազմի ՔԱԿՀՏՏ և Ի
բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Մանուկ Ղազարյան - Փարաքար համայնքի ավագանու անդամ

Վաղինակ Եղիազարյան - Փարաքարի համայնքապետարանի
«Բարեկարգում տնօրինության» բյուջետային
հիմնարկի տնօրեն

Տիգրան Ավետիսյան - համայնքապետարանի ցանցային ադմինիստրատոր

Հովհաննես Մխիթարյան - Փարաքար համայնքի Պտղունք բնակավայրի
վարչական ղեկավարի պ/կ

Աշխատակազմի քարտուղար՝

Գայանե Մանուկյան

Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի
Փարաքարի համայնքի ղեկավարի
2025 թվականի հունիսի 20-ի
թիվ 530-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ՝

1. Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝
Վաղինակ Եղիազարյան
Խմբի անդամներ՝

Ռուբեն Սարգսյան
Նարինե Զաքարյան

2. Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝
Լուսինե Միմոնյան
պա Խմբի անդամներ՝
Կառլեն Հակոբյան
Ավետիս Ֆարֆարյան

3. Տրանսպորտային ապահովման խումբ.

Խմբի ղեկավար՝
Հակոբ Միքայելյան
Խմբի անդամներ՝
Տիգրան Ավետիսյան
Վարդան Պողոսյան

4. Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝
Քնարիկ Մելքոնյան
Խմբի անդամներ՝
Գյուլգյազ Համբարձումյան
Սվետլանա Գալաջյան

5. Հասարակական կարգի պահպանման խումբ

Խմբի ղեկավար՝

Հայկազ Սարգսյան

Խմբի անդամներ՝

Անի Բարսեղյան

Հարություն Գևորգյան

6. Գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և դուրս բերման խումբ

Խմբի ղեկավար՝

Հակոբ Հարությունյան

Խմբի անդամներ՝

Արսեն Գրիգորյան

Վասիլ Հովսեփյան

7. Փրկարարական և հետախուզական խումբ

Խմբի ղեկավար՝


Աշոտ Զոհրաբյան

Խմբի անդամներ՝

Ռուբեն Սարգսյան

Վասիլ Հովսեփյան

Աշխատակազմի քարտուղար՝



Գայանե Մանուկյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Տարահանման հանձնաժողովի մասին Կանոնադրությունը սահմանում է տարահանման հանձնաժողովի ստեղծման կարգը, կազմը և հիմնական խնդիրները խաղաղ պայմաններում, ԱԻ ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ:

2. Համայնքի տարահանման հանձնաժողովը ստեղծվում է համայնքապետի որոշմամբ, որպես մշտական գործող տարահանման մարմին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ տարածքներ տարահանման միջոցառումների նախօրոք պլանավորման, տարահանման մարմինների ստեղծման ու նախապատրաստման և տարահանման միջոցառումների անցկացման ու բազմակողմանի ապահովման նպատակով:

3. Տարահանման հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է համայնքապետը: Տարահանման հանձնաժողովի անմիջական ղեկավարումը դրվում է տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

4. Տարահանման հանձնաժողովն աշխատում է ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նրա գործունեության կազմակերպա-մեթոդական ապահովումը:

5. Տարահանման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով, այլ նորմատիվ-իրավական փաստաթղթերով և սույն Կանոնադրությամբ:

II. Տարահանման հանձնաժողովի հիմնական խնդիրները

6. Խաղաղ ժամանակ՝

1) ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի ՄՓՎ-ի հետ համատեղ ռազմական դրության ժամանակ և ԱԻ ծագման ու սպառնալիքի դեպքում բնակչության տարահանման պլանի մշակում և տարին մեկ անգամ ճշգրտում

2) տարահանման մարմինների ստեղծման, համալրման և նախապատրաստման վերահսկողություն

3) անվտանգ գոտում տարահանվող բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման վայրերի ընտրում

4) տարահանման պլանների, ինչպես նաև տարահանվող բնակչության անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման, առաջնահերթ կենսապահովման պլանների

5) մշակման ընթացքի վերահսկողություն

6) մասնակցություն տարահանման մարմինների տարահանման միջոցառումների անցկացման պատրաստականության ստուգմանը:

7) զինվորական հրամանատարության հետ փոխհամագործակցության կազմակերպումը՝ տարահանման միջոցառումների պլանավորման, ապահովման և անցկացման հարցերով

8) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսումնավարժություններին՝ մշակված տարահանման փաստաթղթերի իրականության ստուգման և տարահանման միջոցառումների կազմակերպման և անցկացման հարցերով գործնական հմտությունների ձեռքբերման նպատակով

9) բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման նախապատրաստման վերահսկողություն, տարահանման փաստաթղթերի մշակում և հաշվառում:

7. ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրելու դեպքում՝

1) կառավարման, կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության բերման, ինչպես նաև տարահանման մարմինների ծավալման վերահսկողություն

2) տարահանվող բնակչության թվաքանակի և կարգի ճշգրտում, տարահանման պլանների, տարահանման բոլոր տեսակների ապահովման իրականացման և կարգի ճշգրտում

3) բժշկական հաստատությունների, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտի դուրս բերման նախապատրաստման վերահսկողություն

4) վտանգավոր գոտուց, ինչպես նաև տարահանման միջանկյալ կետերից բնակչության դուրս բերման և անվտանգ վայրերում տեղաբաշխման համար հատկացված տրանսպորտային միջոցների նախապատրաստման վերահսկողություն

5) առկա պաշտպանական կառույցների պատրաստականության բերման վերահսկողություն

6) տարահանման հանձնաժողովի հետ անվտանգ գոտում ընդունման, տեղաբաշխման և բնակչության առաջնահերթ կենսաապահովման պլանների ճշգրտում:

8. Տարահանման անցկացման կարգադրություն սրանալիս՝

1) տարահանման մարմինների կողմից ժամանակին ազդարարման, հավաքի և տարահանված բնակչությանը անվտանգ վայրեր տեղափոխելու աշխատանքների վերահսկողություն

2) տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման, ընդունման, բաշխման և անվտանգ գոտում տարահանված բնակչության առաջնահերթ կենսաապահովման աշխատանքների կազմակերպում և վերահսկողություն

3) հարևան համայնքների հետ փոխգործողությունների կազմակերպում՝ նրանց տարածքներում տարահանված բնակչության ընդունման և բաշխման հարցերով

4) տարահանման միջոցառումների անցկացման և ապահովման համար տարահանման մարմիններին անհրաժեշտ օգնության ցուցաբերում

5) տարահանման պլանի կատարման, տարահանման պլանի ճշգրտման ուղղությամբ առաջարկությունների մշակմանը վերահսկողություն

6) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մասին տվյալների հավաք և ամփոփում, դրա մասին զեկուցում վերադասին:

9. Խաղաղ ժամանակ բնական և տեխնածին բնույթի ԱԽ ծագման սպառնալիքի դեպքում՝

1) տարահանվող բնակչության ընդունման և տեղաբաշխման պլանավորում

2) կապի և ազդարարման համակարգերի պատրաստության ստուգում

3) տարահանման ենթակա բնակչության թվաքանակի ճշտում

4) տարահանման մարմինների ծավալման պատրաստության բերում

- 5) տարահանման միջոցառումների ապահովման համար տրանսպորտի պատրաստության վերահսկողություն
- 6) առկա պաշտպանական կառույցների պատրաստության վերահսկողություն
- 7) անվտանգ վայրերում, ժամանակավոր տեղակայման կետերում տեղաբաշխման վայրերի պատրաստության հսկողություն:

10. Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝

- 1) տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում կառավարման և կապի կազմակերպում
- 2) տրանսպորտային ապահովման կազմակերպում
- 3) բաժնեչափական հսկողության, բնակչության սանիտարական մշակման, տեխնիկայի և հագուստի հատուկ մշակման (անհրաժեշտության դեպքում) կազմակերպում
- 4) տարահանվող բնակչության ընդունման, հաշվառման և տեղաբաշխման վայրեր տեղափոխման կազմակերպումը
- 5) բնակչության առաջնահերթ կենսաապահովման կազմակերպում:

III. Տարահանման հանձնաժողովի իրավունքները

11. Տարահանման հանձնաժողովն իրավունք ունի՝

- 1) իր իրավասությունների շրջանակներում ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման կազմակերպությունների, հաստատությունների և ձեռնարկությունների համար՝ կապված տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման հետ:
- 2) Հարցում անել կազմակերպություններից, հաստատություններից անհրաժեշտ տվյալների մասին՝ անձնակազմի, նյութական և մշակութային արժեքների տարահանման հարցերի ուսումնասիրման և որոշումների ընդունման համար:
- 3) Տարահանման միջոցառումների ապահովման հարցերով ունկնդրել կազմակերպությունների, հաստատությունների պաշտոնատար անձանց, սահմանված
- 4) կարգով անցկացնել խորհրդակցություն տարահանման մարմինների ներկայացուցիչների հետ:
- 5) Սահմանել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման կազմակերպման հարցերով ՀՀ ԱԻՆ մասնագետների ներգրավմամբ:

IV. Տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը

12. Տարահանման հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքում ընդգրկվում են՝

- 1) տարահանման հանձնաժողովի ղեկավարությունը
- 2) վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբը
- 3) անվտանգ տարածքում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբը

- 4) տրանսպորտային ապահովման խումբը

- 5) սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբը

13. Տարահանման հանձնաժողովի կազմում նշանակվում են. տեղական ինքնակառավարման մարմինների, տարահանման միջոցառումների ապահովմանը մասնակցող կապ ապահովվող կազմակերպության, տնտեսության օբյեկտների պաշտոնատար անձինք՝ բացառությամբ զորահավաքային կարգադրագիր ունեցող անձանց:

V. Տարահանման հանձնաժողովի աշխատանքային կարգը

14. Տարահանման հանձնաժողովի նախագահը կրում է անձնական պատասխանատվություն խաղաղ ժամանակ, ԱԻ ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար:

15. Տարահանման հանձնաժողովի աշխատանքը իրականացվում է տարեկան աշխատանքային պլանով: Տարահանման հանձնաժողովի աշխատանքային պլանը մշակվում է տարահանման հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ համագործակցելով ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) հետ, և հաստատվում է տարահանման հանձնաժողովի նախագահի կողմից:

16. Տարահանման հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են տարահանման հանձնաժողովի արձանագրություններով և ստորագրվում տարահանման հանձնաժողովի նախագահի և տարահանման հանձնաժողովի քարտուղարի կողմից:

17. Տարահանման հանձնաժողովի նիստերն անցկացվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ տարահանման հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ: Տարահանման հանձնաժողովի նիստերը և արձանագրությունների նախագծերը պատրաստում է տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը:


18. Տարահանման հանձնաժողովի առանձին պլանային և արտապլանային նիստերը կարող է անցկացնել տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ տարահանման հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

19. Տարահանման հանձնաժողովի անդամների աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելու համար սահմանվում են ժամկետները.

1) աշխատանքային ժամին՝ 30 րոպե

2) ոչ աշխատանքային ժամին՝ 1 ժամ 30 րոպե (ձմեռային ժամանակ՝ 2 ժամ):

Աշխատակազմի քարտուղար՝

 Գ. Մանուկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 531-Ա

ԱՐԱՄ ՍԱՐԳՍԻ ԲԱԼԱՍՅԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի հունիսի 13-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եցրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի մայիսի 24-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024WNCTVD) և հողամասի սեփականատեր Արամ Սարգսի Բալասանյանի և մյուսների 2025 թվականի հունիսի 13-ի N 2831 դիմումը. **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Արամ Սարգսի Բալասանյանին, Քնարիկ Իսրաելի Բալասանյանին, Անահիտ Արամի Բալասանյանին, Սոնա Արամի Բալասանյանին, Սարգիս Արամի Բալասանյանին և Նարինե Արամի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 04-069-0056-0089-001-005 կադաստրային ծածկագրով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Անի թաղամասի 1-ին շենքի N 5 բնակարանին կից՝ 5.7 քառակուսի մետր արտաքին մակերեսով ինքնակամ կցակառույցը, 1 ինքնակամ բացված պատուհանը և 1 ինքնակամ բացվածքը՝ համաձայն «Ջիվան Արսենի Հարությունյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված շինությունների հատակագծի:

2. Ինքնական կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր կցակառույցի համար կազմում է 590.7 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր մեկ ինքնական բացվածքի և մեկ պատուհանի համար կազմում է 1969 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 7305 (յոթ հազար երեք հարյուր հինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի 900325176155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 20

գ. Փարաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 532-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «ՊՐՈՖ-ԷՔՍՊԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2022 թվականի նոյեմբերի 15-ին տրված հողամասի հատակագիծը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0087-0117 կադաստրային ծածկագրով, 0.0029 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Վ. Մամիկոնյան փողոց, 2-րդ նրբանցք, 38 հողամաս:
2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 20
գ. Փարաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 533-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2025 թվականի մայիսի 22-ին տրված հողամասի բաժանման սխեման և հողամասի սեփականատեր Լարիսա Հայկազի Ավագյանի 2025 թվականի մայիսի 29-ի N 2504 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Լարիսա Հայկազի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-065-0001-0019 կադաստրային ծածկագրով հողամասի կողմ 1-ին՝ (կողմ 1) 0.0395 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 16 բնակելի տուն:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին՝ (կողմ 2) 0.0409 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 16/1 բնակելի տուն:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 20
գ. Փարաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 534-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 401-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով և նկատի ունենալով աշխատակազմի աշխատակիցների փոփոխությունը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման մասին» N 401-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

- 1) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



2025 թ. հունիսի 20
գ. Փարաքար

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ղեկավարի
2025թ հունիսի 20-ի թիվ 534-Ա որոշման

<< Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ղեկավարի
2023թ հունիսի 30-ի թիվ 401-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ

Հ/ h	Քաղաքացիական պաշտպանության ծառայության անվանումը	Ծառայության պետ (ա. ա. հ.)	Զբաղեցրած պաշտոնը հիմնական աշխատավայրում
1	2	3	4
1	կապի և ազդարարման	Անահիտ Վոլոդյայի Վարդանյան	Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ
2	ինժեներական	Հակոբ Գազիկի Միքայելյան	Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսու թյան և բնապահպանության բաժնի պետ
3	բժշկական	Լուսինե Յուրիկի Սիմոնյան	Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ
4	տրանսպորտային	Հարություն Գևորգի Գևորգյան	Հ.Հ.Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում տնօրինություն» բյուջետային հիմնարկի փոխտնօրեն
5	առևտրի և սննդի	Ռուբեն Արմենի Սարգսյան	Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտնե րի հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ
6	էներգետիկայի և լուսաքողարկման	Էդգար Հարությունի Մարգարյան	Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ
7	բույսերի և կենդանիների պաշտպանության	Հակոբ Հովհաննեսի Հարությունյան	Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսու թյան և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
8	նյութատեխնիկական մատակարարման	Քնարիկ Սամվելի Մելքոնյան	Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտնե րի հաշվառման և հավաքագրման բաժնի պետ
9	կոմունալ- տեխնիկական	Վաղինակ Վարուժանի Եղիազարյան	Հ.Հ.Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում տնօրինություն» բյուջետային հիմնարկի տնօրեն>>:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱԶԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 535-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «Զիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2025 թվականի հունիսի 3-ին տրված հողամասի բաժանման սխեման և հողամասի սեփականատեր Լուսինե Հայկի Բաղդասարյանի 2025 թվականի հունիսի 5-ի N 2613 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Լուսինե Հայկի Բաղդասարյանի սեփականության իրավունքով պատկանող՝ 04-082-0003-0006 կադաստրային ծածկագրով հողամասի կողմ 1-ին՝ (առանձնացվող հատված 1) 0.05 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Պտղունք, Սոսեի փողոց, 12 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին՝ (առանձնացվող հատված 2) 0.0513 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Պտղունք, Սոսեի փողոց, 12/1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 20
գ. Փարաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 536-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019 թվականի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Վեմիր Հայկի Հովհաննիսյանի կողմից տրված լիազորագիրը, լիազորված անձ Հովհաննես Վալերիի Բագրատյանի 2025 թվականի հունիսի 5-ի N 2635 դիմումը, **որոշում եմ՝**

1. Վեմիր Հայկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 29102024-04-0039), Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող 04-069-0107-0051 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.0345 հեկտար մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խաղող, (գոտին՝ Մերձարաքսյան, 4-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 284 Հայաստանի Հանրապետության դրամ) փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հող՝ բնակելի տուն կառուցելու համար:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետր խաղողի համար 4157,8 Հայաստանի Հանրապետության դրամ) 345.0 քառակուսի մետրի համար կազմում է 1 434 441 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր քառասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքար համայնքի Մուսալեռ բնակավայրի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական

վարչության 900325176130 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Շառլ-Տիրան Թեքեյան փողոց թիվ 12/1 հողամաս (ծածկագիր՝ 040725XWCGEG):

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 20

գ. Փարաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 537-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019 թվականի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և միկրոռեզոնավ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Մելքոն Իշխանի Մելքոնյանի կողմից տրված լիազորագիրը, լիազորված անձ Հովհաննես Վալերիի Բագրատյանի 2025 թվականի հունիսի 5-ի N 2695 դիմումը, **որոշում եմ՝**

1. Մելքոն Իշխանի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 17102024-04-0027), Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող 04-069-0107-0049 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.0344 հեկտար մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խաղող, (գոտին՝ Մերձարաքսյան, 4-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 284 Հայաստանի Հանրապետության դրամ) փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հող՝ բնակելի տուն կառուցելու համար:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետր խաղողի համար 4157,8 Հայաստանի Հանրապետության դրամ) 344.0 քառակուսի մետրի համար կազմում է 1 430 283,20 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուն հազար երկու հարյուր ութսուներեք Հայաստանի Հանրապետության դրամ քսան լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքար

համայնքի Մուսալեռ բնակավայրի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325176130 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Շառլ-Տիրան Թեքեյան փողոց թիվ 12/3 հողամաս (ծածկագիր՝ 04072CYNVK5Y):

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 20
գ. Փարաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 538-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019 թվականի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Մելքոն Իշխանի Մելքոնյանի կողմից տրված լիազորագիրը, լիազորված անձ Հովհաննես Վալերիի Բագրատյանի 2025 թվականի հունիսի 5-ի N 2637 դիմումը, **որոշում եմ՝**

1. Մելքոն Իշխանի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 18102024-04-0003), Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող 04-069-0107-0048 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.0343 հեկտար մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խաղող, (գոտին՝ Մերձարաքսյան, 4-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 284 Հայաստանի Հանրապետության դրամ) փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հող՝ բնակելի տուն կառուցելու համար:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետր խաղողի համար 4157,8 Հայաստանի Հանրապետության դրամ) 343.0 քառակուսի մետրի համար կազմում է 1 426 125,40 (մեկ միլիոն չորս հարյուր քսանվեց հազար հարյուր քսանհինգ Հայաստանի Հանրապետության դրամ քառասուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել

Փարաքար համայնքի Մուսալեռ բնակավայրի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900325176130 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Շառլ-Տիրան Թեքեյան փողոց թիվ 12/4 հողամաս (ծածկագիր՝ 04072KMRN5B5):

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025 թ. հունիսի 20
գ. Փարաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 539-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019 թվականի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Մելքոն Իշխանի Մելքոնյանի կողմից տրված լիազորագիրը, լիազորված անձ Հովհաննես Վալերիի Բագրատյանի 2025 թվականի հունիսի 5-ի N 2694 դիմումը, **որոշում եմ՝**

1. Մելքոն Իշխանի Մելքոնյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 17102024-04-0087), Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող 04-069-0107-0050 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.0345 հեկտար մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խաղող, (գոտին՝ Մերձարաքսյան, 4-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 284 Հայաստանի Հանրապետության դրամ) փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հող՝ բնակելի տուն կառուցելու համար:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետր խաղողի համար 4157,8 Հայաստանի Հանրապետության դրամ) 345.0 քառակուսի մետրի համար կազմում է 1 434 441 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր քառասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքար համայնքի Մուսալեռ բնակավայրի բյուջե՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325176130 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Շառլ-Տիրան Թեքեյան փողոց թիվ 12/2 հողամաս (ծածկագիր՝ 04072WFHXHQ8):

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 20
գ. Փարաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2025 թվականի N 540-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019 թվականի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Մայիս Անդրանիկի Ներսեսյանի թվականի հունիսի 10-ի N 2728 դիմումը, **որոշում եմ՝**

1. Մայիս Անդրանիկի Ներսեսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ 14052025-04-0102), Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող 04-069-0109-0009 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.045 հեկտար մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խաղող, (գոտին՝ Մերձարաքսյան, 4-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 284 Հայաստանի Հանրապետության դրամ) փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հող՝ բնակելի տուն կառուցելու համար:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետր խաղողի համար 4157,8 Հայաստանի Հանրապետության դրամ) 450.0 քառակուսի մետրի համար կազմում է 1 871 010 (մեկ միլիոն ութ հարյուր յոթանասունմեկ հազար տաս) Հայաստանի Հանրապետության դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքար համայնքի Մուսալեռ բնակավայրի բյուջե՝ Հայաստանի

Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության
900325176130 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Շառլ-Տիրան Թեքեյան փողոց թիվ 8/4 հողամաս (ծածկագիր՝ 04072QTB9PSX):

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



2025 թ. հունիսի 20
Վ. Փարաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունիսի 2025 թվականի N 541-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի միկրոռեզիդենսի մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից 2025 թվականի մայիսի 19-ին տրված գույքի նկատմամբ իրավունքների (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-19052025-04-0090 որոշումը, քաղաքացի Ավետիք Ամիրխանի Թղևսյանի 2025 թվականի մայիսի 22-ի N 2341 դիմումը. **որոշում եմ՝**

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-069-0048-0016-ից կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը այլ հող, 440.0 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել որպես բնակելի կառուցապատման հող:
- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 440.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը, հանել բնակավայրերի նպատակային նշանակության այլ հող գործառնական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի հաշվեկշռում:
- Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 23

գ. Փարաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունիսի 2025 թվականի N 542-Ա

ԱՐՏՅՈՄ ՍԱՄՎԵԼԻ ՏՈՆՈՅԱՆԻ և ԺԱՆԵՏԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՏՈՆՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) ենթակետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի հունվարի 22-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 29-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20247ELZLE), հողամասի սեփականատերեր Արտյոմ Սամվելի Տոնոյանի և Ժանետա Համբարձումի Տոնոյանի 2025 թվականի հունիսի 10-ի N 2701 դիմումը, **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Ա. Իսահակյան փողոց թիվ 17 հասցեում գտնվող՝ Արտյոմ Սամվելի Տոնոյանին և Ժանետա Համբարձումի Տոնոյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ 04-030-0035-0019 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված՝ 18.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղը, 9.1 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան 1-ին հարկը, 37.1 քառակուսի մետր արտաքին մակերեսով վարսավիրանոց, 3.4 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ջիվան Հարությունյան Արսենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի, իսկ հողամասում առկա 80.6 քմ մակերեսով կիսակառույց շինությունը թողնել ինքնակամ:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 37.1 քառակուսի մետր մակերեսով շինությունը՝ վարսավիրանոցը, հանել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի հաշվեկշռում:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան նկուղի և 1-ին հարկի համար կազմում է 1422 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր պարիսպի համար կազմում է 852.3 Հայաստանի Հանրապետության դրամ և 1 քառակուսի մետր վարսավիրանոցի համար կազմում է 2844 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 148 085 (մեկ հարյուր քառասունութ հազար ութսունհինգ Հայաստանի Հանրապետության դրամ):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի 900325003524 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 23

գ. Փարաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունիսի 2025 թվականի N 543-Ա

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԶԱՏԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով, շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը տրված 2025 թվականի հունվարի 13-ին «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 29-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024YRGGVU) և հողամասի սեփականատեր Խաչատուր Ազատի Քոչարյանի 2025 թվականի հունվարի 23-ի N 208 դիմումը. որոշում եմ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ Խաչատուր Ազատի Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0131-0035 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված՝ 93.5 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 2.3 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը, 7.0 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ջիվան Արսենի Հարությունյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 2316 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր գուգարանի և պարսպի համար կազմում է 1389.6 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 229 469,28 (երկու հարյուր քսանինը հազար չորս հարյուր վաթսուինը Հայաստանի Հանրապետության դրամ քսանութ լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողամասին և շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ. Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Զ. Անդրանիկի փողոց, 19/2 բնակելի տուն (ծածկագիր՝ 04012QHZHR6F):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

  ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025 թ. հունիսի 23

գ. Փարաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2025 թվականի N 544-Ա

ՌՈՔԵՐՏ ՄԻՆԱԻԼԻ ՄԻԼՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Դեկլարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի հունիսի 6-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 9-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024MDDVJN), հողամասի սեփականատեր Ռոբերտ Միխայիլի Միլոնյանի 2025 թվականի հունիսի 12-ի N 2801 դիմումը. **որոշում եմ՝**

